

Հավիթը լին արա, ջուրը գցիր՝ մի օր սառելը կգա...

ԲԱՐԵԳՈՐԾ

BAREGORTS 2021, № 2 (51) БАРЕГОРИЦ

«ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱԴԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴԻԱՄԻ» ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱԳՆԱ ՆԻՍՏԸ
ԱՐՑԱԿԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՂԱՎՆՈ ԳՅՈՒՂՈՒՄ



Աղավնո դպրոցի մուտքի մոտ

2020 թ.-ի 44-օրյա պատերազմը մեզ պատճառեց ոչ միայն հազարավոր հայ երիտասարդ կյանքերի ու տարածքների անչափելի կորուստներ, խեղեց տասը հազարից ավելի վիրավորների ու հաշմանդամների ճակատագրեր, այլև ահռելի, ուղղակի անհատուցելի վնաս հասցրեց մեր կեցության հիմքերին, մեր ազգային հպարտությանն ու մարդկային

արժանապատվությանը, կանգնեցրեց ցավալի իրողությունների առաջ, որոնց հետ դժվար է համակերպվել: Բայց սոսկալի մահերն ու կորուստներն անգամ չեն կարող լռեցնել շարունակվող կյանքի և հայոց ոգու ձայնը, ընկճել հայության հարատևման կամքն ու ձգտումը:

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» հոգաբարձության խորհրդի համար ևս առաջացել են չնախատեսված բազմաթիվ դժվարություններ: Արցախ մեկնելը, անասելի նյութական ու հոգեբանական բարդությունների մեջ հայտնված մեր հայրենակիցներին օգնություն հասցնելը այլևս դյուրին չէ: Հիմա չես կարող առանց անձը հաստատող փաստաթղթի, առանց անձնագրի անցնել Հայաստանի սահմանը և թշնամուն հանձնված Քաշաթաղի շրջանի՝ Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորամիավորման հսկողությանը ենթակա 5 կիլոմետրանոց շերտով մտնել Արցախ: Առաջվա պես չես կարող գնալ Շուշի, Հադրութ, Տիգրանակերտ, Դադիվանք ու Քարվաճառ: Բայց ի՞նչ կարող ես անել...

Թեև զինված էինք անձը հաստատող փաստաթղթերով, բայց կար անբացատրելի մի անհանգստություն. ինչպե՞ս ենք տեղ հասնելու, սահմանային անցակետերում թուրք հսկիչների հանդիպելու՞ էինք, թե ոչ, ռուս հսկիչներին ասելու էինք՝ ո՞ւր ենք գնում և ինչո՞ւ:

Այնուամենայնիվ, հիմնադրամի հոգաբարձության խորհուրդն իրականացրեց իր որոշումը՝ ինչ գնով էլ լինի մեկնել Արցախ և առաջնահերթ օգնություն հասցնել այս անգամ Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Աղավնո գյուղի դպրոցի ուսուցիչներին:



Կենտրոնում Ա. Չավուչյանն է

Հագարի գետի ափին կառուցված Աղավնո գյուղը Քաշաթաղի 5 կիլոմետրանոց միջանցքում Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորամիավորման հսկողության ներքո մնացած հինգ հայաբնակ գյուղերից մեկն է: Կարմիր տանիքներով բարեկարգ գյուղի բնակիչները պատերազմի

հետևանքով հեռացել էին և հիմա աստիճանաբար վերադառնում են: Կան անվտանգության երաշխիքներ, անգամ ռուս զինվորականների ընտանիքներ են ուզում այնտեղ բնակվել, համայնքի ղեկավար Անդրանիկ Չավուչյանն էլ դեմ չէ, սակայն ասում է՝ թող պաշտոնապես դիմեն, որ չքվա՞ գրավեցին:

Անդրանիկ Չավուչյանը...

Սիրիայի Ղամիշլիից՝ Լիբանան, այնտեղից էլ Արցախ մեկնած ու բնակություն հաստատած այդ խիզախ հայորդին մասնակցել էր 2016 թ. քառօրյային և 2019 թվին էր ՏԻՄ ընտրություններում ընտրվել Աղավնո համայնքապետ: Հարուստ կենսագրությամբ, հայոց հողին կառչած իսկական հայ է նա՝ անձնավեր, խիզախ հայորդին անվտանգության մեծ երաշխիք է Աղավնո վերադարձողների համար: Նա ոչ միայն չի հանձնել ինքնապաշտպանական զենքերը, այլև կարողացել է ռուսական հրամանատարությանը համոզել, որ հայ գյուղում պիտի ծածանվեն հայկական դրոշները: Հայրենի հողի վրա՝ գեղատեսիլ բնության գրկում կառուցված գյուղը նրա շնորհիվ անսասան մնաց 44 օրյա պատերազմի թոհուրոհի մեջ, չենթարկվեց սադրանքների և լպիրշ թշնամու քթի տակ ապրում է դեռևս ոչ բնականոն ու լիարժեք կյանքով:

Չորավոր է համայնքը Անդրանիկ Չավուչյանի ղեկավարությամբ: Նրա բոլոր անդամներն անխտիր՝ դպրոցականներից սկսած մինչև ուսուցիչներն ու գյուղի տարեցները, ապրող իրական հերոսներ են: Իրենց տուն ու տեղը, հանրային կառույցները կանգուն պահելով՝ նրանք ամրացնում են հայ ոգին ու Արցախի վերածննդի հույսը:

Հետպատերազմյան շրջանում, բնական է, վատացել են բնակիչների կենսապայմանները, դժվարացել է Երևան - Ստեփանակերտ մայրուղով երթևեկը նույնիսկ ռուս խաղաղապահների հսկողությամբ: Հոգսաշատ առօրյան, գույթ ու խղճից զուրկ տմարդի ու բռնազավթիչ թշնամու հարևանությունը չեն ընկճում Աղավնոյի բնակիչներին, և բարոյական չէր լինի արհավիրքի դեմ նրանց միայնակ թողնելը:

Աղավնոյի դպրոցը, ուր հայեցի կրթություն ու դաստիարակություն են ստանում գյուղի վաղվա տերերը, համայնքի համար խստագույն անհրաժեշտություն է: Բայց այն չի կարող գոյություն ունենալ առանց նվիրյալ ուսուցիչների, որոնք հանձն են առել բոլոր զրկանքներն ու վտանգները հաղթահարելով՝ նոր սերնդի դաստիարակությունն իրականացնելու սրբազան պարտականությունը:

Մայիսի 13-ին հիմնադրամի հոգաբարձության խորհուրդը՝ գործադիր տնօրեն պրոֆ. Գուրգեն Մելիքյանը, նախագահ պրոֆ. Արծրուն Ավագյանը, անդամներ՝ «Բարեգործ» պաշտոնաթերթի գլխավոր խմբագիր պրոֆ. Սամվել Մուրադյանը, պրոֆ. Յուրի Ավետիսյանը գեղանկարիչ Շմավոն Շմավոնյանը, Սուրեն Սեփանյանը կազմով մեկնեց Աղավնո:

Նույն ճանապարհին էր, ինչ պատերազմից առաջ, բայց ավերված, նորոգման կարոտ ու մեքենայի «հոգին հանող» դարուփոսերով: Չկար երբեմնի գվարթությունը, բոլորի դեմքին դաջված էր կորուստների և պարտության դառնության հասկանալի թախիծը:

Եղեգնաձորով ու Վայքով, Արփայի ավերով ընթանալիս նախկինում հրապուրիչ բնությունն անգամ ի վիճակի չէրավ մեզ հանելու մղձավանջային մռայլ խոհերից, անգամ Գորիսում կանգ չառանք: Գնում էինք մեր բզկտված, վիրավոր հայրենիքի մի հատվածը՝ նրա հայրենապահ հերոս բնակիչներին այցելության: Թեև զինված էինք անձը հաստատող փաստաթղթերով, բայց կար անբացատրելի մի անհանգստություն. ինչպե՛ս ենք տեղ հասնելու, սահմանային անցակետերում ռուս սահմանապահների հետ զրուցելու ենք:

Բոլոր տազնապաները թողնելով հետևում՝ վերջապես մեր խումբը հասավ Արցախի սահման, մտավ Հազարի գետի կիրճ, ռմբակոծված կամրջից աջ թեքվելով՝ անցակետում ներկայացավ բարեհամբույր ռուս խաղաղապահներին:

Պարզ մի արարողություն էր փաստաթղթերի ստուգումը: Ամեն ինչ կարգին էր, բայց մեզ ռուսերենով մաղթած «բարի ճանապարհը» երկար չէր. Եթե ճանապարհը շարունակեինք, 14 կմ հետո Քաշաթաղի Բերձոր շրջկենտրոնն էր՝ կրկին հայերով վերաբնակեցվող, իսկ 61 կմ հետո՝ Արցախի Ստեփանակերտ մայրաքաղաքը: Բայց այս անգամ այլ էր Արցախ այցելելու մեր նպատակը. անմիջապես աջ թեքվեցինք և մտանք ձորալանջի գոգավորության մեջ՝ գետափին տեղավորված կարմիր տանիքներով բարեկարգ գյուղը՝ Աղավնո, ուր դպրոցամերձ տարածքում մեզ դիմավորեցին հյուրընկալ տանտերերը՝ դպրոցականներն ու ուսուցիչները՝ դպրոցի տնօրենի և Աղավնոյի համայնքի ղեկավար Անդրանիկ Չավուշյանի առաջնորդությամբ:

Այցելեցինք վերակառուցված դպրոցը, ծանոթացանք ուսուցիչների ու աշակերտների, ծնողների հետ, հաղորդակից դարձանք նրանց հոգսերին ու տազնապաներին և վերստին համոզվեցինք, որ հայրենի հողում բնակվելը, այն թշնամու ոտնձգություններից պաշտպանելը, խաղաղ աշխատանքով զբաղվելը, դպրոցում երեխաներին կրթությամբ ապահովելը հայ մարդու բնական հատկանիշն է, երազանքն ու ձգտումը:

Մեր հիմնական հանդիպումը կայացավ դպրոցի միջանցքում, ուր ուսուցիչներին հիմնադրամի դրամական նվերները հանձնելուց հետո Աղավնոյի բնակիչներին հիմնադրամի անունից քաջալերող խոսքով ողջունեցին Գ. Մելիքյանն ու Ս. Մուրադյանը: Հյուրերին շնորհակալություն հայտնեցին դպրոցի տնօրենն ու համայնքապետ Ա. Չավուշյանը:



2016 թ. ապրիլյան քառօրյա պատերազմում զոհվածների հիշատակի աղբյուր-խաչքարը Աղավնո գյուղում

Դպրոցի հարևանությամբ էր կանգնեցված 2016 թ. ապրիլյան քառօրյա պատերազմում զոհվածների անմահության աղբյուր - հուշարձանը, որի ծորակը ավանդական հավերժություն խորհրդանշող զարդանախշի կենտրոնում է, իսկ վերնամասում խաչ է՝ հայոց անպարտելի ոգին խորհրդանշող ինքնապաշտպան ազնիվ զենքի՝ սրի պատկերով:



Երևան-Ստեփանակերտ մայրուղու եզրին հիմնվեց ծառուղի՝ նվիրված մեր ժողովրդի ազնիվ բարեկամ, Հայոց ցեղասպանության համաշխարհայնացման գործում անուրանալի ավանդ ներդրած գերմանացի գիտնական Թեսսա Հոֆմանին: Դրվագ ծառատունկից

Սակայն Աղավնոն զոհ և անհետ կորուստներ ունեցավ նաև 2020-ի աշնանային պատերազմում: Նրանց հիշատակին իրականացվեց ծառատունկ, և լուսանկարվելուց հետո հնչեցին հրաժեշտի խոսքեր կրկին հանդիպելու, Աղավնոյի և հարևան հայաբնակ գյուղերի ուսուցիչների հետ հանդիպման խոստումներ:

Ոլորապտույտ ճանապարհը մեր Արցախից մեզ վերադարձրեց Երևան: Այնուամենայնիվ, արդյունավետ և հուսալից օր էր համատարած մղձավանջի մեջ:

Հետդարձին ծանր ապրումներն ակամա ընդհատվում էին հայոց կյանքի դժվար ընթացքի, Արցախի դեռևս անորոշ ճակատագրի, Հայաստանի ներքաղաքական վիճակի և Աղավնոյի հարևան մյուս հայկական համայնքներին այցելելու հարցերի քննարկումներով: Երանի Աղավնոյի նման հայրենի հողը պահող շատ գյուղեր ունենայինք...



Աղավնո գյուղի ընդհանուր տեսքը

**ԵՎՍ ՄԵԿԸ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶՈՀԱՍԵՂԱՆԻՆ՝
ԼԵՅՏԵՆԱՆՏ ԳԵՂԱՄ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՄԱԴԱԹՅԱՆ**

Նա ծնվել էր ապրելու և ապրեցնելու համար, հայ ընտանիք հիմնելու և մեր երկրի բարեշինության համար: Բայց 21-րդ դարում՝ 2020 թ հոկտեմբերի 20-ին, զոհվեց Արցախում Իշխանաձորի պաշտպանության համար մղված մարտերում:

Ահավոր պատերազմ էր դա, որ սանձագերծեցին Ադրբեջանն ու Թուրքիան՝ ՆԱՏՕ-ի, Իսրայելի, Պակիստանի, ու ԱՖղանստանի, շահախնդիր քրիստոնյա պետությունների ու վարձկան ահաբեկիչների հետ միասին հայության ու համաշխարհային քաղաքակրթության դեմ: Այդ ահավոր ահաբեկչական պատերազմը միջազգայնորեն արգելված զենքերով, քանի՛ մատաղ կյանք խլեց, քանի՛ օջախ մարեց, փնտրված քանի՛ մասնագետ կորցրին արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը, գիտությունն ու արվեստը, քանի՛ աշխատող ձեռք պակասեց Հայաստանից, քանի՛ հայ ընտանիք չկազմվեց, քանի՛ սիրող սիրտ չերջանկացավ, քանի՛ հայ երեխա չծնվեց... Հազարավոր են կորուստները, անթիվ են անպատասխան հարցադրումները



Հազարավորներից մեկն էր Երևանի պետական համալսարանի «Տնտեսագիտություն և կառավարում» բաժնի երբեմնի ուսանող, լեյտենանտ **Գեղամ Հովհաննեսի Մադաթյանը**: Հեռախոսի խցիկով արված սիրողական լուսանկարը պատկերել է նրան ծառատունկի ժամանակ բահը ձեռքին, առնական կեցվածքով ու խելացի հայացքով:

Երիտասարդ հայ մտավորական էր նա՝ լի երկիրը շենացնելու, ծառատունկով Հայաստանը ծաղկեցնելու վճռականությամբ: Բոլոր զոհվածների պես այժմ նա էլ իր հարգարժան ծնողներին ու հարազատներին, մեր ողջ ժողովրդին հպարտության հետ միասին պատճառում է դաժան մահու ցավ, կսկիծ ու դառնություն:

Մեր խոնարհումը հայրենիքի հարատևության և ժողովրդի փրկության համար նահատակված բոլոր այդ անձնվեր հայորդիների լուսավոր հիշատակին և խորին ցավակցությունն ու խոնարհումը բոլորի սգակիր ծնողներին ու հարազատներին:

Լուսանկարը, որ արվել է շուրջ երեք տարի առաջ՝ 2018 թ. մարտի 12-ին Արցախյան շարժման 30-ամյակի առթիվ Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի վարչական կենտրոն Բերձորի մատույցներում

կազմակերպված ծառատունկին, պատկերում է զոհված լեյտենանտ Գեղամ Մադաթյանին ու ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի ուսանող Արման Բադալյանին (մյուս երևացողները ճանաչելի չեն):

Ծառատունկը, որ դարձել է հուշ ու պատմություն, կազմակերպել էին Երևանի պետական համալսարանն ու «Գուրգեն Մելիքյանի» Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը»:

**ՄՏԵՓԱՆ ԱԼԱԶԱԶՅԱՆԻ «ՉՍՊԻԱՑԱԾ ՎԵՐՔ» ԵՌԱՀԱՏՈՐ ՎԵՊԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ**

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաջաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» կարևոր ձեռնարկումներից մեկն էլ հայագիտական ու հայանպաստ կարևոր գրքերի տպագրության հովանավորումն է: Հիմնադրամն այդպիսով նպաստում է ոչ միայն մեր գեղարվեստական ու հայագիտական մտքի զարգացմանը, այլև իր նպաստն է բերում հայության արդար իրավունքների վերականգնմանն ու պատմական ճշմարտության բացահայտման սուրբ գործին, ճանաչել տալիս մեր պատմությունը:

Հերթական կարևոր գրքի շնորհադեսը, որ նվիրված էր ականավոր գրող Ստեփան Ալազաջյանի «Չսպիացող վերք» եռահատոր վեպի վերահրատարակմանը՝ ճոխ հայտագրով կայացավ մայիսի 31-ին ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի լեփ-լեցուն հանդիսասրահում՝ դեկան, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, պրոֆ. Արծրուն Ավագյանի, գրողի դստեր, այս շնորհանդեսին մասնակցելու համար ԱՄՆ-ից ժամանած Թերեզա Ալազաջյանի և հիմնադրամի գործադիր տնօրեն, պրոֆ Գուրգեն Մելիքյանի նախագահությամբ:




Շնորհանդեսի նախագահությունը՝ պրոֆ. Ա. Ավագյան, գրողի դուստր Թ. Ալազաջյան, պրոֆ. Գ. Մելիքյան

Վերջին երեք տարիներին այս սրահում չէր եղել նման տոնական հանդիսություն, ուստի բնական պիտի համարել «մի լավ բանի կարոտ» մասնակիցների առատությունը, այն բուռն ոգևորությունը, որ դրսևորում էին ներկաները

տաղանդաշատ Ստեփան Ալազաջյան գրողի ու նրա այս վեպի հանդեպ: Իսկ թե ինչո՞ւ էր հիմնադրամի հոգաբարձության խորհուրդը կարևորել «Չսպիացող վերք» եռահատոր վեպի վերահրատարակությունը՝ շատերին հասկանալի դարձավ շնորհանդեսի ընթացքում զեկուցողների բովանդակալից ելույթներից:

Եռահատոր վեպը հանգամանորեն ներկայացրեց հիմնական զեկուցողներից մեկը՝ պրոֆ. Ա. Ավագյանը, որի բավական ընդարձակ, արդի գրականագիտության նվաճումների դիրքերից մասնագիտորեն հնուտ վերլուծող առաջաբանով լույս է տեսել Հայոց ցեղասպանու-



թյան մի կարևոր ժամանակահատվածը պատկերող այս վեպը, որն ունի ինչպես գեղարվեստական, այնպես էլ պատմա-ճանաչողական անհերքելի վավերագրի արժեք:

Մյուս զեկուցողը՝ բան. գիտ. թեկնածու, դոց. Ս. Սրապիոնյանը նույնպես անդրադարձավ գեղարվեստական երկի վավերական հիմքերին,

ներկայացրեց վեպի կերպարային համակարգն ու գեղարվեստական յուրահատկությունները:

Իզուր են այսօր իրենց նախնիների ցեղասպանական գործողությունները հերքող, 2020 թ. աշնանը հայության ու մարդկային քաղաքակրթության դեմ ահաբեկչական նոր պատերազմ ու ցեղասպանություն իրագործած և իրենց արխիվները «մաքրագարդած» թուրքերն աշխարհով մեկ ճչում, թե ցեղասպանության ճանաչումը միայն պատմաբանների գործն է: Նախ՝ Ցեղասպանությունն արդեն ճանաչած երեք տասնյակից ավելի պետություններն ու միջազգային կազմակերպություններն ունեցել են բավարար հիմքեր, երկրորդ՝ Հայոց եղեռնապատումի ողջ գրականությունը թե՛ հայերենով, թե՛ օտար լեզուներով, ընդ որում նաև օտար և հենց թուրք հեղինակների ստեղծած, նույնպես կատարված ողբերգական իրադարձությունների արտացոլումն են և ունեն հենց վավերական հիմքեր ու պակաս անհերքելի ապացույցներ չեն: Ստ. Ալաջաջյանի եռահատոր այս վեպը նույնպես իրական փաստերի վրա է հիմնված և շարադրված է հայրենիք ու հարազատներին կորցրած հայ մարդու սրտամորմոք ցավով ու հզոր տաղանդով: Վավերական չէ՞ թեկուզ գոնե Դեր Զորը, որտեղ մարդասպանության դաժանագույն

եղանակներով ոչնչացվել են մի քանի հարյուր հազար հայեր (ստույգ թիվը միայն թուրքերն իրենք գիտեն): Թող որևէ թուրք փորձի հերքել Հալեպում ծնված Ալաջաջյանի՝ իր սերնդակից որբերի միջավայրում մեծացած, անհողակույտ մեռած հարազատների կորստյան ցավի չափացող վերքի մրմուռը, որ, ինքնակենսագրական լինելով, բազմիցս հաստատված է վեպում ականատեսների վկայություններով. «...1939 թվականին հայրս ինձ տարել է Դեր-Էլ-գոր, որպեսզի ցույց տա, թե որտեղ են թաղվել պապս, տատս, հինգ հորեղբայրներս, մեր գերդաստանի հարսները, հորեղբայրներիս զավակները, թվով քառասուներկու հոգի, բայց չի գտել նրանց շիրիմները»: Սա միայն մի գերդաստանի ողբերգությունն է, իսկ ամբողջ ժողովրդի՞նը... Դրա հաստատումն էին ուսանողների՝ վեպից հատվածների ընթերցումները, որ լավեցին հետաքրքրությամբ:

Իր հայրիկի և վեպի գրության ընթացքի մասին տպավորիչ հուշեր ներկայացրեց դուստրը՝ Թերեզա Ալաջաջյանը, ապա ընծայագրելով գրքի երեք հատորները նվիրեց ներկաներին:

Շնորհանդեսի ավարտին տեղի ունեցավ համերգ և պատշաճ հյուրասիրություն:



**«ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ»
ՀՈԳԱԲԱՐՉՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆՈՐ ԿԱԶՄԸ**

Հիմնադրամի գործադիր տնօրեն - Մելիքյան Գուրգեն Վրեժի, ԵՊՀ արևելագիտ. ֆակ. պրոֆ., Հայաստան
Հոգաբարձ. խորհրդի նախագահ - Ավագյան Արծրուն Աբգարի, ԵՊՀ հայ բան. ֆակ. դեկան, պրոֆ., Հայաստան
Նախագահի տեղակալ - Մելիքյան Մերի, Հայաստան

Խորհրդի անդամներ.

1. Մաֆարյան Ալեքսանդր - ԵՊՀ, պրոֆեսոր, թյուրքագիտ. ամբիոնի վարիչ, Հայաստան
2. Մուրադյան Սամվել - ԵՊՀ, բան.գիտ.դոկտոր, պրոֆ., հայ գրակ. ամբիոնի պատվավոր վարիչ, Հայաստան
3. Հարությունյան Սվետլանա - ԵՊՀ, արևելագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ, Հայաստան
4. Միրզոյան Քնարիկ - ԵՊՀ, թյուրքագիտ. ամբ. դոցենտ, Հայաստան
5. Գրիգորյան Մարատ - ԵՊՀ, աշխարհագրությ. և երկրաբան. ֆակ. դեկան, Հայաստան
6. Սեփանյան Սուրեն - ԵՊՀ դասախոս, Հայաստան
7. Պողոսյան Աշոտ-ԵՊՀ, Հայաստան
8. Շմավոնյան Շմավոն - արվեստագետ, Հայաստան
9. Հակոբյան Զոյա, Հայաստան
10. Քեթիպեան Արա - գրող, հասարակական գործիչ, Հայաստան.
11. Վարդանյան Արմոնդ - լիազոր ներկայացուցիչ, ԱՄՆ
12. Ալեքսանդրյան Իրինա, ԱՄՆ
13. Կյուրեղյան Վարուժ, ԱՄՆ
14. Փափայանց Շիլա, ԱՄՆ
15. Քանյան Մերի, ԱՄՆ
16. Բաշմակյան Հակոբ, ԱՄՆ
17. Զանգոզյան Վարդան, ԱՄՆ
- 18 Ալաջաջյան Թերեզա, ԱՄՆ
19. Մարտին, Չարեհ, ԱՄՆ
20. Կահվե Թոնի Շուքրի, Անգլիա
21. Մահտեսի - Հակոբյանց Ռուբեն, Գերմանիա
21. Վանեցյան Կարեն, Շվեյցարիա
22. Շահնազարյան Հենրիկ, Շվեդիա
23. Բորոյան Ռաֆիկ, Շվեդիա
24. Ալթիբարմաթյան Հակոբ, Ֆրանսիա
25. Սիրափյան Վարուժան, Ֆրանսիա

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ - բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ՝

ԱՎԱԳՅԱՆ Ա., ք. գ. դ., պրոֆեսոր
ՄԵԼԻՔՅԱՆ Գ., ք. գ. ք., պրոֆեսոր
ՍԱՖԱՐՅԱՆ ԱԼ., պ. գ. ք., պրոֆեսոր
Շարվածքը լուսանկարները և
ձևավորումը՝ Ս. Մուրադյանի:

Տպաքանակը՝ 99: Բաժանվում է անվճար:
Հասցեն՝ Երևան 0025, Աբովյան 52 Ա, հայ բա-
նասիրության ֆակուլտետի մասնաշենք, ակադ.
Արսեն Տերտերյանի անվան հայ գրականության
կաթինետ:
Հեռ.՝ 060 710 629, 010 55 25 37, 010 52 29 36: